

թատրոն կշինե՛ք քան թե դպրոց, եւ եթե իշխանութիւն տրուի իրեն՝ թաղային վարժարանը թատրոնի կփոխե՛. եկեղեցւոյ մէջ ալ ներկայացում տալու համար Պատրիարքարանէն արտօնութիւն խնդրելու կ'երթայ:

Պալատին կիները նշանաւոր են իրենց պարկեշտութեամբն եւ հաւատարմութեամբ: Ասոնք շաբաթն երեք անգամ տախտակ կը սրբեն եւ երեք անգամ լաթ կը լուան: Նորաձեւ հագուստներ հագնելու համար իրենց քունը չեն խռովեր. պարգութիւնը կսիրեն եւ նորաձեւութիւնն միշտ պարգութեան մէջ կգտնեն:

Թաղիս օդը աղէկ չէ. բայց ի՞նչ ազդեցութիւն ունի աղէկ օդն, երբ մարդ իւր քսակին մէջ օդէն ուրիշ բան չունենար:

ԺԵ.

ԻՃԱՏԻԷ

Բնակութիւն հաստատելու համար պատուական թաղ մ'է, եթե մարդս նապաստակ ըլլայ... լեռնէն վեր ելնելու դիրութիւն ունենալու համար:

Երանի՛ անոնց, որք նապաստակ չեն, բայց երկար շունչ ունին. վասնզի անո՛նց համար է այս թաղն: Վա՛յ անոնց, որոնց շունչը կարճ է. վասնզի անոնք արժանի չեն այս թաղին մէջ բարձրանալու. անոնց շունչը կէս ճանքան չհասած կսպառի, մանաւանդ երբ Գուգլունճութէն վեր ելնել ուզեն:

Հոս բնակելու համար լայնածաւալ սիրտ մ'ալ ունենալու է, որ չճաթի մարդ՝ թաղեցւոյն ընթացքը քննելով:

Եկո՛ւր մտնենք նախ եւ առաջ թաղիս ծովահայեաց գրօսարանն, ուր տասնի չափ ազգայիններ օրուան խնդիրներուն վրայ կխօսին: Ասոնց ամենն ալ ստոյգ աղբիւրներէ լուրեր կհաւաքեն եւ իրարու կհաղորդեն: Կը փափագի՞ս այս օրուան լուրերն իմանալ:

–Շատ հետաքրքիր եմ նոր լուրեր իմանալու:

–Եկո՛ւր, իրենցմէ քանի մը քայլ հեռու նստինք եւ նոր լուրեր իմանանք: Ահա սկսան խօսիլ.

–«Իքը հրաժարական տուած է այսօր:

–Այո՛, տուած է, բայց Մէկալը չէ ընդունած:

–Մուշտակը կանդէ եղեր այս կէտին վրայ: